Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
հոկտեմբերի 18 -ի N 733 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ

«Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Խաչարձան գյուղի մանկապարտեզ-խաղասենյակի մասնակի նորոգում և ջեռուցում»

1.	Ծրագրի նպատակը	Իրականացնել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Խաչարձան գյուղի մանկապարտեզ-խաղասենյակի մասնակի նորոգման և ջեռուցման մարտկոցների տեղադրման աշխատանքները
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	Անհատ բարերարներ (իրավաբանական և ֆիզիկական անձինք)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ, ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ, Դիլիջան համայնք, Խաչարձան գյուղ, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 2,200,073.00 դրամ:
7.	Բարեգործությունն ստացողը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Խաչարձան գյուղի բնակիչներ
8.	Ծրագրի իրականացման տեւողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019 թ. հոկտեմբերի 22-ից մինչև 2019 թ. նոյեմբերի 29-ը:

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2019 թ. հոկտեմբերի 22-ից մինչև 2019 թ. նոյեմբերի 29-ը ընկած ժամանակահատվածում նախատեսվում է մասնակի վերանորոգել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Խաչարձան գյուղի մանկապարտեզ-խաղասենյակը և տեղադրել ջեռուցման մարտկոցներ: Արժեքը՝ 2,200,073.00 դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Արթուր Բաբաջանյան» ԱՁ-ի կողմից նախատեսվում է մասնակի վերանորոգել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Խաչարձան գյուղի մանկապարտեզ-խաղասենյակը և տեղադրել ջեռուցման մարտկոցները ՝ 2,200,073.00 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Տավուշի մարզպետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ